Յաւելուած

ՏԱՐԱԺԸ ԼՈՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

№ 30 կիրակի օգոստոսի 14 | **հինգերորդ տարի 1894**

ՔԱՂՀԱՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

Ուրանիա

—

Խորասուզելով այն հանապազօրեայ համակրութեան մէջ, որ ունէր այն էակի համար, որին բոլորովին նւաճել էր, Իկլէան միայն տեսնում էր ամեն բան նրանով, գործում էր միայն նրա համար։ Երեկոյեան խաղաղ ժամերին, երբ նստում էր նւագելու դաշնամուրի վրայ կամ Շոպէնի մէկ նօկտուրնը, որ զարմանում էր թէ ինչպէս նախքան սիրելը, չէր հասկացել, կամ նւագելով երգելու իր այնքան մաքուր և լայնատարած ձայնով նօրվէգիական երգերը, կամ Շումանի մէլօդիաները, նրան թւում էր թէ իր սիրեցեալը այն ունկնդիրն է, որ միայն ընդունակ է լսելու սրտի այդ ներշնչումները։ Քանի հրաշալի ժամեր անցկացրաւ Սալէրօն Պասսի տան այդ ընդարձակ մատենադարանի մէջ, տարածւած դիւանի վրայ, հետևելով երբեմն նայւածքով արեւելքի գլանակի ծուխի քմահաճ թրթռումներին, մինչդեռ Իկլէան իր երևակայութեան անձնատուր, երգում էր երկրի քաղցր sondag-ը, Դօն Ժուանի սերենադը, Լամարտինի լիճը, կամ երբ վազեցնելով իր ճարպիկ մատերը կլաւիշների վրայ, նա թրօցնում էր օդի մէջ Բոչերինու մէլօդային երազը։

Գարունը վրայ էր հասել։ Մայիս ամիսը տեսել էր Պարիզում. համաշխարհային հանդիսի բացումը, որի մասին խօսեցինք այս գրքի սկզբում և Պասսի սլարտիզի բարձրութիւնները պատսպարում էին սիրահար զոյգի եգեմը։ Իկլէայի հայրը, որ յանկարծ կանչւել էր Թունիս, վերադարձել էր արաբական զէնքերի մի ժողովածու ըերելով իր Քրիստինիայի միւզէօնի համար։ Նրա դիտաւորութիւնն էր շուտով վերադառնալ Նօրւէգիա, ուստի և մտադրւած Նօրւէգիացի օրիորդի և իր բարեկամի մէջ համաձայնութիւն էր կայացել, որ իրանց ամուսնութիւնը կատարւի օրիորդի հայրենիքում, խորհրդաւոր յայտնութեան տարեդարձի օրը։

Նրանց սէրը ըստ իր էութեան, շատ հեռու էր այն սովորական միութիւններից, որոնք հիմնւում են՝ մի քանիսը զգայական կոպիտ հաճոյքի, մի քանիսը աշխարհային ձանձրոյթի կամ վայրկենական քմահաճոյքի, իսկ մի քանիսն աւելի շատ կամ քիչ ծանւած շահերի վրայ, որոնք և ներկայացնում են մարդկային սիրոյ մեծամասնութիւնը։ Նրանց մշակւած միտքն առանձնացնում էր նրանց մտածողութեան գերագոյն գաւառների մէջ. նրանց զգացումների փափկութիւնը նրանց պահում էր մի իդէալական մթնոլորտի մէջ, որտեղ նիւթի բոլոր ծանրութիւնները մոռացած էին. նրանց ջղերի ծայրայեղ զգայականութիւնը, նրանց բոլոր զգացողութիւնների ընտիր նրբութիւնն ընկղմում էր նրանց այնպիսի հիացումների մէջ, որի փափկութիւնն անհուն էր թւում։ Եթէ ուրիշ աշխարհներում ևս սիրում են, սէրն այնտեղ դրանից աւելի ընտիր և խոր չի կարող լինել։ Ֆիզիօլոգիատի համար նրանք մի կենդանի վկայութիւն կարող էին լինել այն իրողութեան, թէ հակառակ գռեհիկ կարծիքի, բոլոր զւարճութիւնները բըղխում են ուղեղից, զգայականութիւնների նատակութիւնը համապատասխանում է էակի պսեխիական զգայականութեան։

Պարիզը նրանց համար ոչ թէ մի քաղաք էր, ոչ թէ մի աշխարհ, այլ մարդկային պատմութեան թատրոնը։ Նրանք արդէն երկար ժամեր անց էին կացրել մեր հիանալի միւզէօններում, մանաւանդ մեր մեծ Լուվրի հին և արդի chef-d'oeuvre-ների մէջ, որտեղ արւեստը կարծես յաւերժացրել է մարդկային մտածողութեան ամբողջ պատմութիւնը, արտայայտելով նրանց անկորնչելի կոթողներով։ Լուվրի հրաշալի գալերիաները Վէրսալի գալերիաներից աւելի լաւ են պահպանել արքայական շքեղութիւնների մթնոլորտը։ Նրանք սիրում էին այնտեղ միմեանց հանդիպել. այդտեղից գնում էին հին Պարիզի հմայքների ծոցում վաղուց աներևոյթացած դարերի կեանքով ապրելու։ Բոլոր նշանաւոր վայրերը, հնութիւնները, Ֆրանսիայի պատմութեան բոլոր յիշատակները նրանց ուխտագնացութեան առարկան դարձաւ։ Ամբոխի մէջ, նրանք առանձնանում էին անցեալի գիտողութեան մէջ և տեսնում էին ինչ որ գրեթէ ոչ ոք չէր գիտէ տեսնել։

Եւ այդպէս ահագին քաղաքը նրանց հետ խօսում էր իր առաջւայ լեզւով, թէ այն ժամանակ երբ նրանք կորչում էին Նօտր-Դամի աշտարակների, սիւների, կոթողների, արաբէսկների մէջ և տեսնում էին իրանց ոտքերի տակ մարդկային փեթակը քնած երեկոյեան մթնշաղի մէջ, թէ այն ժամանակ, երբ աւելի բարձրանալով, նրանք աչքատում էին Պանտէօնի գագաթից վերակազմելու Պարիզի հին ձևը և նրա յաջորդական զարգացումը, սկսեալ Հռովմէական կայսրներից, մինչև Փիլիպպոս Օգոստոսը և իր յաջորդները։ Գարնան արեգակը, ծաղկած շուշանները, մայիսեան ուրախ ա-

ռաւօտները, լի թռչնիկների դայլայլիկներով և ջրային գրգիռներով, ձգում էին նրանց շատ անգամ Պարիզից դուրս, մարգերի և անտառների մէջ։

Ժամերը սլանում էին ինչպէս զեփիւռի շունչերը, օրը չքանում էր իբրև մի անուրջ և գիշերը շարունակւում էր սիրոյ աստուածային երազը։ Լուսնթագի մրրկայոյզ աշխարհում, որտեղ օրերը և գիշերները երկու անգամ աւելի արագ են քան այստեղ և մինչև անգամ տասը ժամ չեն տևում, սիրահարները ժամերի չքանալն էլ դրանից աւելի շատ չէին կարող տեսնել։ Ժամանակի չափը մեր մէջ է։

Մի երեկոյ, երկուսն էս նստած էին Շէվրոզ դղեակի հին աշտարակի տանիքի վրայ, սեղմուած միմեանց կողքին, մէջ տեղ, որտեղից առանց արգելքի կարելի է աչք ածել ամբողջ շրջակայքի վրայ։ Հովիտի մեղմ օդը խառնուած մօտակայ անտառների բնական անուշաբոյրով, բարձրանում էր մինչև իրանց. սոխակը մայաոների ճաղ ոստերի մէջ, փորձում էր իր մելոդիական երգը աստղերին ուղղած։ Արեգակը նոր մայր էր մտել ոսկու և ծիրանու շլացման մէջ և միայն արևմուտքը դեռ լուսաւորւած էր բաւական գօրեղ լոյսով։ Ամեն բան կարծես նննջում էր անհուն բնութեան ծոցում։

Իկլէան, մի քիչ գունատ, բայց արևմտեան երկնքի լոյսով շողշողուն, կարծես թափանցւած էր արեգակից և ի ներքուստ լուսաւորւած, այնքան նրա մորթը սպիտակ էր և թափանցիկ։ Նրա աչքերը մթնացած, նրա փոքրիկ մանկական բերանը թերեւակի բաց, կարծես խորասուզւած էր արևմտեան լոյսի դիտողութեան մէջ։ Յենւած Սպէրօի կրծքին, բազուկները ձգած նրա պարանոցով, նա անձնատուր էր եղել իր անուրջներին, երբ մի թափառական աստղ խփեց անցկացաւ երկինքը ճիշտ աշտարակի գլխին։ Իկլէան դողդողաց, մի քիչ նախապաշարւած լինելով։ Արդէն ամենափայլուն աստղերը երևում էին երկնքի խորութեան մէջ. աւելի բարձր, համարեա զենիտում, Արկտօրիուսը, պսպղուն դեղին ոսկեգոյնով. դէպ արևելքը, աւելի բարձր, Վէգան զուտ սպիտակ. հիւսիսում, Կասիէլլան. արևմուտքում Կաստորը, Պօլլուքսը և Պրօկիօնը։ Նկատւում էին նոյնպէս և Մեծ-Արջի եօթն աստղները, Կոյսի Հասկը, Րեգալուսը։

Կամաց կամաց, մի առ մի, աստղները ծածկում էին երկնային հաստատութիւնը։ Բևեռային աստղը ցոյց էր տալիս երկնագնդի միակ անշարժ կէտը։ Լուսինը բարձրանում էր. նրա կարմրաւուն սկաւառակը ցոյց էր տալիս նւազող փազիսը։ Մարսը փայլում էր Պօլլուկսի և Րեգուլուսի մէջտեղը, հարաւա-արևելքում. Երևակը — հարաւա-արևելքում։ Աղջամուղջը հետզհետէ տեղի էր տալիս գիշերի խորհրդաւոր թագաւորութեան։

«Չե՞ս գտնում, շշնջաց Իկլէան, որ բոլոր այս աստղները կարծես աչքեր են և մեզ են նայում։

— Երկնային աչքե՛ր, ինչպէս քոնը։ Ի՞նչ կարող են տեսնել երկրի վրայ մի բան աւելի գեղեցիկ քանզ դու... և քան մեր սերը։

— Սակայն, աւելացրեց նա։

— Այո՛, սակայն, աշխարհը, ընտանիքը, ընկերութիւնը, սովորութիւնները, բարոյականութեան օրէնքները, էլ ինչ գիտեմ. ես հասկանում եմ քո մտածմունքները։ Մենք մոռացել ենք բոլոր այդ բանները, որպէս զի հնազանդենք ձգողութեան, ինչպէս արեգակը. ինչպէս բոլոր այս աստղները, ինչպէս սոխակը որ երգում է, ինչպէս համայն բնութիւնը։ Շուտով մենք կլսանք այդ ընկերական սովորութիւններին իրանց պատկանող հարկը և կարող ենք յայտնապէս հրաժարակել մեր սերը։ Դրանով մինթէ աւելի երջանիկ կլինենք։ Հնարաւոր է աւելի երջանիկ լինել քան ենք մենք այս րոպէիս։

— Ես քոնն եմ, պատասխանեց Իկլէան։ Ինձ համար ես գոյութիւն չունեմ, ես ոչնչանում եմ քո լոյսիդ մէջ, քո սիրուդ մէջ, քո երջանկութեան մէջ, և ես էլ ուրիշ ոչ մի բան չեմ ցանկանում, ոչ մի բան։ Ո՛չ։ Ես մտածում էի այդ աստղների մասին, այդ մեզ նայող աչքերի մասին և ինձ հարցնում էի ո՞րտեղ են այսօր բոլոր այն մարդկային աչքերը, որոնք դիտել են դրանց, հազարաւոր տարիներից ի վեր, ինչպէս մենք դիտում ենք այս երեկոյ, ո՞րտեղ են բոլոր այն սրտերը, որոնք բաբախել են ինչպէս բաբախում է այս վայրկեանին մեր սիրտը, որոնք միախառնւել են անվերջ համբոյրների մէջ աներևոյթացած գիշերների գաղտնիքի մէջ։

— Նրանք բոլորը գոյ են։ Ոչ մի բան չի կարող փչանալ։ Մենք ընկերացնում ենք երկինքը և երկիրը և իրաւունք ունինք։ Բոլոր դարերում, բոլոր ազգերի մէջ, բոլոր քաղաքութիւնների մէջ, մարդկութիւնը միշտ հարցրել է այդ աստղաւոր երկնքին իր ճակատագրի գաղտնիքը։ Այնտեղ մի տեսակ գուշակութիւն էր։ Երկիրը երկնքի մի

աստղն է, ինչպէս Հրատը և Փայլածուն երկնքի երկիրներն են, խաւար, լուսաւորուող մեզ նման միևնոյն արեգակով և ինչպէս բոլոր այս աստղները, որոնք հեռաւոր արեգակներ են։ Ո՛ր միտքդ թափթփանում է ինչ որ մարդկութիւնը մտածել է իր գոյութեան օրից։ Բոլոր նայուածքներն որոնել են երկնքում մեծ Հանելուկի պատասխանը և դիցաբանութեան առաջին օրերից սկսած, Ուրանիան է՝ որ պատասխանել է.

«Եւ նա է, այդ աստուածային Ուրանիան, որ միշտ կըպատասխանէ։ Նա բռնած ունի իր ձեռքում երկինքը և երկիրը. նա մեզ ապրեցնել է տալիս անսահմանութեան մէջ... Եւ չեռոյ մարմնացնելով նրա մէջ տիեզերքի ուսումնասիրութիւնը, կարծես թէ մեր հայրերի բանաստեղծական զգացումը կամեցել է լրացնել գիտութիւնը կեանքով, շնորհքով և սիրով։ Նա ամենալնտիր մուսան է։ Նրա գեղեցկութիւնը կարծես մեզ ասում է, թէ աստղագիտութիւնը և անսահմանը ճշմարտապէս հասկանալու համար, պէտք է լինել... սիրահար»։

Գիշերը վրայ էր հասնում։ Լուսինը յամրաբար բարձրանալով արևելեան երկնակամարի վրայ, տարածում էր մթնոլորտի մէջ մի լոյս, որն, անզգայաբար, փոխարինում էր աղջամղջային լոյսին և արդէն քաղաքում, իրանց ոտքերի տակ, անտառների և աւերակների ներքև, մի քանի լոյսեր այստեղ և այնտեղ երևում էին։ Նրանք ոտքի էին կանգնել աշտարակի գագաթի մէջտեղում։ Իկլէան գեղեցիկ էր, շրջանակուած իր վարսերի պսակի մէջ, որոնց խոպոպիքը ծփում էին իր ուսերի վրայ։ Գարնանային օդի բուրմունքները, խառնուած մօտակայ պարտէզների մանիշակների, մեխակների, շուշանների, վարդերի անուշահոտութեան հետ, մեղմամաղձոտ գիշերների զով փափկասիրութեան հոտը բարձրանում էին դէպի աստղերը այդ բուրմունքի և սիւքերի հետ։ Առանձնութիւնը և լռութիւնը շրջապատում էին նրանց։ Մի երկար համբոյր, գոնէ հարիւրերորդն այդ գարնանային գիշեր օրւայ մէջ, միացրեց նրանց շրթունքները։

Իկլէան դեռ երազում էր։ Մի փախուցիկ ժպիտ պայծառացրեց յանկարծ նրա դէմքը և անհետացաւ, չքանալով իբրև մի անցողական պատկեր։

—Ի՞նչի մասին ես մտածում, հարցրեց նա.

—Ո՛հ, ոչինչ. մի աշխարհային, զուտ հողեղէն, մի փոքր թեթև միտք։ Ոչինչ։

—Բայց ի՞նչ, հարցրեց, գլուխը դնելով իր բազուկների մէջ։

—Դէ լաւ, կասեմ. ես ինձ հարցնում էի թէ... այն միւս աշխարհներում, բերան ունեն... սրովհետև, տեսնում ես, համբոյրը, շրթունքները»...

—

Այդպէս անցնում էին ժամերը, օրերը, շաբաթները, ամիսները իրանց բոլոր մտածմունքներով, իրանց բոլոր զգացողութիւնների, իրանց բոլոր տպաւորութիւնների սերտ միութեան մէջ։ Երկուսն էլ զեկավարելով գուշեհիկ կրքերի հաւասար արհամարհանքով և մի բնազդային հետազոտութեամբ այն բոլոր գեղեցիկ շրջանակների, որ երկրային բնութիւնը կարող էր ընծայել իրանց սրտերի աստուածային բոմանին, նրանք սաստկանում էին շատ անգամ մարդկային յուզմունքից շատ հեռու, դէպի անտառների խոր առանձնութիւնները կամ դէպի ծովի վեհ տեսարանները։ Պարիզի բոլոր շրջակաները և հին ամրոցները հետզհետէ նրանց հետաքրքրութեան արշաւանքի առարկայ գարձան, որոնց մէջ նրանք, իբրև ազատութեան և սիրոյ ծարաւ երկու թռչուններ, գնում էին երազելու, երգելու, քնանալու, երազելու և նորից երգելու համար։ Ո՛վ գաղտնիութեան լուսով լուսնի փայլումներ, ոսկեզօծ ճառագայթներով արևի մարմաուններ, և ո՛վ դուք, գիշերի լռակեաց աստղեր, որ փայլում էք խոր ծովի վրայ, երբէք աւելի հիացած նայուածքներ չեն բացել ձեր առաջ, երբէք մարդկային ուրիշ սրտեր չեն բաբախել այդպէս սերտ միութեամբ Սիրոյ յաւիտենական շունչի հետ, որ վարում է աշխարհը։

Այո, այդպէս անցան իբրև մի քաղցր երազ, այն հիանալի գարնան, այն ջերմ ամառի ամիսները։ Յուլիսեան արեգակը փայլում էր իր բոլոր գօրութեամբ և հասել էր Իկլէայի համար իր հայրենիքը մեկնելու ժամը։ Որոշած ժամանակին, նա գնաց իր հօր հետ Բրիտանիա։ Եթէ թատրոնութեան մէջ, մի և մի՝ անում են երկու, ճիշտ կըլինի ասել որ սիրոյ մէջ մի և մի՝ անում են մի։ Բայց կարող էին նրանք երկար ժամանակ անջատած մնալ։

Սպէրօն նրանց հետևեց մի քանի օրից յետոյ։ Երիտասարդ գիտնականի մտադրութիւնն էր անցկացնել Նորւէգիայում օգոստոս և սեպտեմբերը ամիսները և այդտեղ շարունակել իր անցեալ տարի ձեռնարկած հետազօտութիւնը մթնոլորտային ելեքտրականութեան և հիւսիսափայլների մասին

մարդակերներ

դիտողութիւնները, որոնք մասնաւորապէս հետաքրքրական էին իր համար և հազիւ ժամանակ էր ունեցել սկսելու։

Նօրէգիայում վարած կեանքն երազների ամենաքաղցր շարունակութիւնն եղաւ։ Նրանք այցելեցին միասին այն առանձնակեաց և լուսեաց լճերը, այն վայրենի բլրակները, այն ընդարձակ և մելամաղձոտ տափաստանները, որոնք յիշեցնում են Օսսեանի, հին բարդերի քնարի վրայ երգած Սկովիան։ Ամեն բան նրանց խօսում էր անսահմանութիւն և սէր։ Հիւսիսի խարտեաշ աղջիկը փաթաթում էր իր բարեկամին մի այնպիսի մըշտանջենաւոր հմայքի ալսակով, որ գուցէ մոռացնել տար նրան ընդ միշտ գիտութեան սէրը, եթէ նա. ինքն էլ, ինչպէս ասացինք, չունենար անձնական մի անյագելի ծարաւ ուսման համար։

Այն փորձերը, որոնց անխոնջ հետազօտողը ձեռնարկել էր, հետաքրքրում էին Իկլէային նոյնչափ, որչափ նրան և Իկլէան սկսեց մասնակցել այդ փորձերին, ընկերանալով նրան իբրև մի անձնուէր օգնական նրա հետաքրքիր հետազօտութիւնների մէջ։ Իկլէան նոյնպէս կամեցաւ հասկանալ բնութիւնն այն հիւսիսափայլի խորհրդաւոր բոցերի, որոնք երեկոները շօշափում են մըրիկնոլորտի բարձրութիւնները և որովհետև այդ հետազօտութիւնների շարքը նրան տանում էին դէպի մի ցանկութիւն՝ օդապարիկով մի վերելք կատարելու, որպէս զի երևոյթը նոյն իսկ իր աղբիւրում քննէ, Իկլէան էս նոյն ցանկութիւնը զգայ։ Սալերօն փորձեց համոզելու որ ձեռք վերցնի այդ մտադրութիւնից, ի նկատի ունենալով, որ օդապարիկային փորձերն անվտանգ չեն լինում։ Բայց հէնց այդ վտանգին մասնակցելու միակ միտքը բաւական էր խլացնելու Իկլէային իր սիրեցեալի աղաչանքները չլսելու համար։

Երկար վարանումներից յետոյ, Սալերօն որոշեց իր հետ տանել նրան և պատրաստեց, Բրիստինայի համալսարանում մի վերելք հիւսիսափայլի առաջին գիշերուան համար։

(Կըշարունակուի)

Ն Ա...

—

Սոխակն էլ թռաւ,
Իմ վարդն էլ փակւեց,
Արևն էլ մտաւ,
Խաւարը սպառեց...

Չորս կողմս ամեն ինչ
Վշտագին սգայ,
Աշխարհս դառնարկւեց,—
Ա՜խ, երբ «նա»—գնաց...

ՍԻՒՆԴ

ՊԱՀԱԿԱՆՈՑ № 123

(Մակս Մոնտանիից)

—

Ինչպէս ես ենթադրում էի, այնպէս էլ պատահեց։ Առաջս դրած էր տէրունական երկաթուղիների վարչութիւնից ստացած պաշտօնական թուղթը, որտեղ ասւած էր թէ «Մ. կայարանի հսկողութեան յանձնւած 123 համար-պահականոցի պահնորդի օգնական Բուրկարթը պաշտօնից արձակւում է»։ Այդ ժամանակ ես կայարանապետ էի Մ. կայարանում, որը, մի փոքրիկ տեղ էր լեռներում ընկած. այդ պատճառով էլ ինձ էր վիճակւել յայտնել Բուրկարթին վարչութեան կայացրած վճիռը. շատ հաճելի չէր ինձ այդ պարտականութիւնը կատարել։

Բուրկարթը, որին վարձել էին երկու շաբաթւայ համար փորձելու՝ թէ որքան նա ընդունակ պահնորդ է, ցոյց տւաւ, որ իր պարտականութիւնները ճանաչող և կատարող մի բարեխիղճ պահնորդ է և՝ որին կարելի է կատարեալս Հաւատ ընծայել։ Բայց ափսոս. նա ժամանակին իր լեզուն զսպել չգիտէր. նա համոզւած էր, որ իր պարտականութիւնները ամենայն բարեխղճութեամբ է կատարում և այդ պատճառով էլ իր մեծերից ոչ և է նկատողութիւն լսած ժամանակ վիճում էր նրանց հետ։

«Հպատակութիւն» բառը նրա համար մի դատարկ հնչիւն էր և՝ որ և է նկատողութեան նա պատասխանում էր թէ «ինքը գիտէ ինչպէս պէտք է անել, թէ՝ կարիք չկայ իրան մատնացոյց անելու և թէ՝ առիթ չէ տւել իրան յանդիմանելու»։

Նրա վերջին խօսքերն անպայման ճշմարիտ էին։ Այսպիսի դէպքերում պատահում էր, ես ինքս էի հեռանում ասելով՝ ինչ որ պէտք էր. սակայն բոլորովին հաւատացած էի, որ 123 համար պահականոցի մէջ փոթորիկը կըհանդարտւի հինգ իսկոյն, երբ նրա պատճառը կըհեռանայ. այսինքն, այս դէպքում—իմ սեպհական յարդելի անձնաւորութիւնը։ Ես սրտանց համոզւած էի և ապացոյցներ էլ ունէի դրան, որ Բուրկարթը երախտագէտ է դէպի ինձ—ես նրա հետ լաւ էի վարւում։ Յետոյ ես իմացայ, որ նա ինքն շատ անգամ էր զղջում իր տաքութեան վրայ. բայց ի՜նչ արած, այդպէս էր նրա բնաւորութիւնը, որին նա տիրել չըկարողացաւ։

Այնու ամենայնիւ, ինչպէս ասացի, մենք հաշտ էինք ապրում։ Սակայն՝ ինձանից զատ կային և ուրիշ անձնաւորութիւններ, որոնց հետ Բուրկարթի վարմունքը նոյնն էր՝ ինչ որ ինձ հետ. նրանք չէին ցանկանում համբերել այդպիսի անպատւութեան։ Ահա այդպիսիներից էր և գնացքների ընդհանուր շարժման կանոնաւորութեան վրայ հսկող պետը, որի հետ Բուրկարթը շատ անգամ էր ընդհարւել դատարկ բաների համար։ Այստեղ արդէն մանգաղը քարի էր դէմ ընկնում, նրան շատ անգամ էին յանդիմանել, նոյն իսկ տուգանքի ենթարկել այդպիսի վարմունքի համար։ Ամեն անգամ ինձ հարց ու փորձ էին անում նրա վարքու բարքի մասին և ես ամեն անգամին էլ ստիւած էի լինում ամենաբնաիր վկայութիւն տալու. այսպիսով գործը ձգձգւեց բաւական ժամանակ, մինչև-որ վերջապէս որոտաց երկինքը։

Դժբախտութիւնը կատարւել էր, վերջապէս և ես Բուրկարթին պէտք է յայտնէի դրա մասին։

Ձար չըկար. հրամայեցի կանչել նրան մօտս՝ և կարդացի արձակման թուղթը. այդ րոպէին նրա դէմքով, կարծես կայծակ անցաւ.

—Ուրեմն՝ ես մնում եմ առանց մի կտոր հացի, շշնջաց նա։

—Լսեցէք, Բուրկարթ, ասացի ես. դուք գիտէք թէ քանի անգամ ես քեզ ազատել եմ վտանգից. ինչ որ կարելի էր՝ արի. եթէ ցանկանում էք, ես ձեզ մի լաւ վկայական կըտամ։

—Բայց, այնուամենայնիւ, ես արձակւած եմ։

Նրա ճակատի երակները ուռել էին.

—Դուք ինքներդ գիտէք ձեր թերութիւնը, Բուրկարթը....

—Նրա համար, որ ճշմարտութիւնն ես ասում եմ երեսին՝ ինձ զրկում են հացից... Իմ

բնաւորութիւնս այսպէս է. իսկ ծառայութեանս վերաբերմամբ՝ ինձ ոչ մի բանում չի կարելի յանձնել. հէնց որ սկսում եմ խօսել—գալիս է կոկորդս լցւում և ինչ ուզում ես արա, լսել չեմ կարող. ողորմած տէր, մի՛թէ մեղաւոր եմ, որ բնաւորութիւնս այսպէս է:

—Է՜հ, մենք քեզ համար մի ուրիշ տեղ կը գտնենք՝ ասելով աշխատում էի հանգստացնել նրան:

—Ուրիշ տե՛ղ, բացականչեց նա. այն էլ այդ գալլի անցաթղթով... եթէ մեկին վռնդել են ռերուանական ծառայութիւնից, նրան այլ ևս չեն հաւատում. նա իր ամբողջ կեանքում կը մնայ ապատաւորւած:

Ես չէի կարող չը համաձայնւել դրա հետ. այդ պատճառով էլ լուռ էի:

—Հապա կինս, որդիքս, շարունակեց նա. ո՞ւր պիտի գնամ ես նրանց հետ ձմեռը.....

Մի րոպէ ես մտածմունքի մէջ ընկայ. ամենայն անկեղծութեամբ ես կարեկցում էի խեղճին.

—Գիտէք ինչ կայ, Բուրկարտ, ասացի ես. մի խնդիրք կը գրեմ վարչութեան և կը խնդրեմ, որ ձեզ թողնեն մնալ մինչև գարուն. այն ժամանակ ձեզ համար աւելի հեշտ կը լինի տեղ գտնել:

Պահնորդի այրւած դէմքը խորը զգացմունքով փայլեց.

—Եթէ կը յաջողւի ձեզ այդ անել, այն ժամանակ մի ամբողջ ընտանիքի հայր, մայր և վ'ց հոգի երեխաներ կը մնան ձեզ սպարտական մինչև գերեզման:

—Բայց, այնու ամենայնիւ, ես կը փորձեմ:

Այստեղ մեր խօսակցութիւնը վերջացաւ: Ես վարչութեան խնդրամատոյց եղայ, սակայն ինձ պատասխանեցին թէ «վարչութեան վճիռն անփոփոխ է մնում»: Բուրկարտը մի խօսք անգամ չ'ասաց, երբ ես յանձնեցի նրան իմ խնդիրքի պատասխանը, և լուռ ու մունջ դուրս եկաւ սենեակից:

Նա մի շաբաթ էլ դեռ պարտաւոր էր ծառայել: Այդ շաբաթւայ վերջին օրը – գիշերւայ հերթապահութիւնը նրան էր ընկել: Ես գնացի մօտը պահականոց, որ կայարանից բաւական հեռու էր ընկած, այնտեղ, որտեղ դծերը միանում էին: Ինչպէս միշտ՝ մաքրութիւնն օրինակելի էր այնտեղ. երբ ես մտայ, Բուրկարտը լամպերն էր մաքրում:

—Հը, ինչ կայ, Բուրկարտ,—ասացի ուրիշ մի որ և է զբաղմունք կամ պաշտօն գտա՞ր քեզ համար, թէ ոչ:

—Այո, պատասխանեց նա. մի զբաղմունք գտել եմ, որ յամենայն դէպս թէ ինձ համար է և թէ ընտանիքիս:

—Շատ ուրախ եմ. ի՞նչ պաշտօն է:

—Ջաղցածութիւն... դուրս շպրտեց նա իր բերանից:

—Է՜. հերիք է, Բուրկարտ. պատասխանեցի ես, չէ՞ որ կը գտնւեն բարի ընկերներ, որոնք կ'օգնեն ձեզ մի կերպ անցկացնել այդ ծանր ժամանակը:

—Ընկերնե՞ր, մրմռաց նա, գործը մինչև գրպանը հասնելն են լաւ նրանք:

—Մի յուսահատւիր... մի կերպով կարգի կընկնի:

Եւ ես հեռացայ:

Ես դեռ կայարան չէի հասել, երբ բարձրացաւ մի սարսափելի ձիւնախառն փոթորիկ: Գիշերւայ մօտ այդ փոթորիկն այնքան սաստկացել էր, որ դուրսը տիրող մթութիւնը զարհուրելի էր: Կեանքումս այսպիսի փոթորիկ չէի տեսել: Կէս գիշերից մի ժամ և հինգ րոպէ անց մեր կայարանով սլիտի անցնէր, առանց կանգ առնելու սրընթաց գնացքը. ժամը մէկին 3 րոպէ մնացած հարևան կայարանից յայտնեցին, որ գընացքը ճանապարհ ընկաւ իր ժամանակին: Ութ րոպէից յետոյ նա այստեղ պէտք է լինէր. ես հէնց ուզում էի լաստերս վերցնել և դուրս գալ կայարանի առաջ, երբ լսեցի հեռագրական ապարատի չխչխկոցը:

Նշանը 123 համար պահականոցից էր:

«Իսկոյն և եթ ուղարկեցէք այստեղ բոլոր ազատ բանւորներին. սրընթաց գնացքին սարսափելի վտանգ է սպառնում»:

Մի սարսափելի անհանգստութիւն պատեց ինձ. ի՞նչ էր պատահել. ձեռքիս տակ ունէի երեք մարդ. ես իսկոյն հրամայեցի գնալ...

123 համար պահականոցը, ինչպէս ասացի, կայարանից բաւական հեռու էր գտնւում. նրանից 150 քայլի վրայ, դէպի կայարան, գտնւում էր սիմաֆորը *). իսկ տասն քայլի վրայ՝ նոյնպէս դէ-

*) Կարմիր և սպիտակ լուսով մի նշան է կայարանից բաւական հեռու անկւած, որով ցոյց է տրւում գնացքներին երկաթուղու գծի ազատ կամ փակ լինելը. բոլոր կայարանների համալ պարտաւորեցուցիչ է և անհրաժեշտ:

սի կայարանը՝ գլխաւոր գծի հետ միանում էր պահեստի գիծը, որը տանում էր դեպի ապրանքները դարսելու պլատֆորմը և որտեղ կանգնած էին մի քանի դատարկ և վարձած վագոններ։

Պահնորդ Բուրկարտը լապտերը ձեռքին դուրս էր եկել պահականոցից սրընթաց գնացքին դիմաւորելու և ամեն կերպ աշխատում էր, որ քամին լապտերը չհանգցնի. նա նայեց սեմաֆորին.— ըսպիտակ լոյսը պարզ երևում էր ձիւնախառն բուքի միջով. դա նշանակում էր գիծը ազատ է։ Բայց, յանկարծ, նրան թւաց թէ այնտեղ, որտեղ հին ըէլսները միանում էին գլխաւոր գծի հետ և որի վրայով մի քանի րոպէից յետոյ պիտի անցնէր սրընթաց գնացքը՝ կանգնած է մի ինչ որ է ահագին, սև զանգուած. նա վազեց դէպի այնտեղ, մագերը բիզ-բիզ կանգնեցան տեսածից։

Սլաքի*) վրայ կանգնած էր մի ապրանքի վագոն, որ ինչպէս երևում էր, քամին էր հրել այնտեղ և՝ որը գլխաւոր գծի հետ ուղիղ անկիւն էր կազմում և կիսով չափ էլ նրան ծածկած էր. վագոնը սլաքը անցնել չէր կարողացել, բայց գլխաւոր գիծը յամենայն դէպս՝ փակել էր։ Եթէ չըյաջողեցաւ իր ժամանակին գնացքը կանգնեցնել, կամ այդ արգելքը հեռացնել, կործանումն անխուսափելի է։

Բուրկարտը իսկոյն հասկացաւ վտանգը. նա դարձաւ պահականոց և նշան տւաւ կայարանին (այդ նշանն էր, որ ինձ սարսափելի շփոթութեան մէջ ձգեց) և նորից վերադարձաւ այնտեղ, որտեղ վտանգ էր սպառնում գնացքին։

Գնացքը կանգնեցնելու նշան տալը շատ հասանական է, անօգուտ լինէր. որովհետև այսպիսի փոքրիկ մեքենավարը հազիւ թէ տեսնէր կամ լսէր. և վերջապէս գնացքը չէր էլ հասնի կանգնելու վտանգի առաջ մինչև անգամ և այն ժամանակ, երբ Բուրկարտը վազելու լիներ նրան գիմաւորելու։ Կործանումը խափանելու միակ – ուղիղ միջոցը մնում էր ապրանքի վագոնը յետ մղել տեղից. հարցը միայն նրա մէջն էր, թէ կարելի է արդեօք այդ անել, երբ մինչև գնացքի հասնելը մնում էին միայն մի քանի րոպէներ։

Յուսալով իր հսկայական ուժի վրայ՝ Բուրկարտը ուսը դէմ տւաւ վագոնին, հրեց, բայց այդ ահագին ծանրութիւնը տեղից չըշարժւեց։

—Երկնային Հայր, ազատիր և գթա... հառաչեց նա.

Մի անգամ էլ ուսը դէմ տւաւ. մի քանի վայրկեաններ էլ անցան.

—Փառք քեզ Տէր, վագոնը տեղից շարժւեց։

Կամաց կամաց, գժւարութեամբ, բայց և այնպէս վագոնը վտանգաւոր տեղից հեռացաւ. նա սլաքից ցած ընկաւ և նորից գնաց կանգնեց հին ըէլսների վրայ. յոգնած պահնորդը կանգ առաւ շունչ քաշելու. նրա ոյժերը սպառւում էին։

Ինչպէս յանկարծ—ողորմած Տէր,—վագոնը նորից յետ-յետ մղւեց քամուց. բոլոր աշխատութիւնը զուր անցաւ։

Կայարանից օգնութիւն դեռ չէր կարող հասնել. թէև վայրկեանները բուրկարտի համար թըւում էին իրրև յաւիտենականութիւն, բայց նրա կայարանին նշան տւած ժամանակից անցել էր ոչ աւելի՝ քան երեք րոպէ։

Նա ձեռքի տակ ոչինչ էլ չունէր, որ վագոնի անիւների տակ դնէր շարժումը խափանելու համար պահականոց վերադառնալ՝—մտածելն անգամ աւելորդ էր.—վագոնը կրգար և առաջւայ պէս կ'ընկնէր սլաքի վրայ և՝ այլևս յոգնած Բուրկարտը ոչ ոյժ և ոչ էլ ժամանակ կունենար նրան նորից յետ մղելու տեղից։

Ձշմարիտ Ե. 123 համար պահականոցից այդ վրդովեցնող լուրը առանք թէ չէ՝ սեմաֆորը խիստ ծածկեցինք. բայց սեմաֆորը կայարանից 150 քայլի վրայ էր գտնւում և գնացքը՝ միևնոյն է՝ չէր հասնի գտնդաղեցնել իր շարժումը. Բուրկարտը այդ հասկանում էր. նա փորձէց ձեռքով պահել վագոնը, բայց ոյժը չըպատեց։ Այդ րոպէին նա դառացող բուքի միջով լսեց մօտեցող գնացքի գղրդիւնը. ապրանքի վագոնը դեռ սլաքին չէր հասել և գնացքը կարող էր անարգել անցնել մօտով. սակայն սլաքի և վագոնի միջի տարածութիւնը հետզհետէ պակասում էր, մինչդեռ միւս կողմից աւելի էր մօտենում գնացքը։

—Եթէ կենդանի մարդն անզոր է գժբախտութեան առաջն առնել, թող այդ անի մեռածը...

—Տէր իմ, ներէ մեղքերս... օգնէ որբերին...

Այս ասելով Բուրկարտն ընկաւ բէլսների վրայ խաչաձև, որպէս զի իր սեպհական մարմնով կանգնեցնէ առաջ սահող ապրանքի վագոնը։

Դրա հետևից մի դրդումն էլ և վագոնը կանգնեց։

Մի րոպէից յետոյ սրընթաց գնացքը անցաւ անարգել—չարաբաստիկ սլաքի վրայով։

*) Գծերի վրայ գտնւող այն չարժական երկաթեայ մասերն են, որոնցով փոխոխւում են գնացքների ուղղութիւնը մի գծից միւսը։

Այսպիսով գնացքը իր ոչ մի բան չըկասկածող հարիւրաւոր ճանապարհորդներով փրկւած էր մի քաջասիրտ մարդու հերոսական մեծագործութիւնով, որը դժւար ու ծանր րոպէներում չըտատանուեց զոհել կեանքը իր նմաններին ազատելու համար։

—

Մենք Բուրկարտին գտանք կիսամեռ, վագոնի առաջին զոյգ անիւների մօտ ընկած. նա արնաքամ էր լինում, բայց կենդանի էր։

Ես իսկոյն հասկացայ թէ ինչ էր կատարւել, նրա դրութիւնից պարզ երևում էր եղելութիւնը։ Գնացքի անցնելուց յետոյ տարանք նրան կայարան, որտեղ երկու բժիշկ ճիգ էին թափում դժբախտ պահնորդի կեանքն ազատելու։ Նա րոպէ րոպէ ուշքի գալով՝ պատմեց մեզ եղելութիւնը։ Ամեն կողմից սկսան տեղալ մեծ մեծ նւիրաբերութիւններ Բուրկարտի և իր ընտանիքի օգտին, դրանց մէջ աչքի էր ընկնում և մի խոշոր գումար, որը տւել էր հէնց մեր երկաթուղու գլխաւոր վարչութիւնը։

Հերոս պահնորդը մինչև օրս կատարում է իր պարտականութիւնները 123 համար պահականոցում, բայց արդէն իսկական ծառայութեան մէջ. նրա կուրծքը զարդարւած է մի մեծ մեդալով, որը տւել է նրան վտանգւածներին ազատելու համար։

Այնու ամենայնիւ Բուրկարտն երբէք չուղղւեց առաջւայ նման՝ որև է նկատողութիւն լսած ժամանակ սկսում էր մրմռալ և գոչել։

Իսկ այժմ ամեն մի նոր զալմազալից յետոյ գնացքների գլխաւոր պետը ասում է ինձ.

— Մեր՝ այս Բուրկատը՝ անուղղելի է... սակայն ինչ արած. դէպի նա պէտք է ներողամիտ լինել, որովհետև ոչ ամեն ոք այնպէս կանէր, ինչպէս նա արաւ, մանաւանդ ի նկատի ունենալով, որ պաշտօնից էլ զրկել էին։

Ես ի նշան համաձայնութեան՝ միայն գլխով էի անում։

Ա. Տ. Բ.

***

Ես երգում եմ երգ թռչնալի
Հին դարերից աւանդած,
Մահաշունչ երգն այդ ահռելի
Երկրի վրայ միշտ մնայ...

—

Այնտեղ չըկայ ոչ մի հնչիւն
Որ բախտ և յոյս աւետէր,
Ոչ վառ սիրոյ տենչանք անհուն,
Ոչ վայելքի երազներ։

—

Իբրև վիշապ հազարգլխեան
Սեղմել է նա մեր աշխարհ,
Այնտեղ մեռնում է ուրիշ ձայն,
Մաշւում է կեանք անդադար։

—

Այդ խուլ երգը իբրև մահի
Օրհասական սև տագնապ
Ծանրացած է երկրագնդի
Շուրջ բոլորած մերկութեամբ։

—

Նա հնչում է գիշեր, ցերեկ,
Դարեր անվերջ, անընդհատ,
Ուր խլանում են միշտ անհետք,
Զոհերի դառն հեծեծանք։

—

Այն երգում է հեգ մարդկութիւն
Մերկ ու քաղցած մեռնելով,
Բեռ և կապանք բարձած տրտում
Գալիք վհատ յոյսերով....

—

Եւ երգում է և ընթանում,
Անիծում է կեանք համայն,
Պատասխանն է մօտից հնչում—
Լկտի քրքիջ զեղխութեան...

—

Ես երգում եմ մի երգ տխուր
Որով երկիրն է սնւած...
Քաղց, հալածանք, մահն ահաւոր,
Անդ տիրում են բռնայած....

ԵՐ. ՊԱԼԵԱՆ

—

ՓԵԼԻԷՏՕՆ

Կ. ՊՕԼՍՈՅ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԴԷՄՔԵՐԸՆ ՄԷԿԸ— Կ. ԷՖ. ԻՒԹԻՒՃԵԱՆ

—

Ազգային պատառաբոյծները կը տարբերին բուսականներէն ու կենդանականներէն, որք փոխանակ բոյսերու և կենդանիներու մարմինը ծծելով սնելու՝ ազգին արիւնը ծծելով կապրին։

Մեր այժմեան վարչութիւններու, խնամակալութիւններու, հոգաբարձութիւններու անդամոց մեծամասնութիւնը պատառաբոյծերէ կազմուած է՝ որոնց մի մասն երբեմն առանց ընտրութեան, իսկ մի մասն ալ զանազան ազդեցութեանց ներքև նշանակուած են։

Այս պաշտօնեաները տակաւին մինչև այսօր կ'իշխեն ուսումնական և ուսումնարանական հարցերու ճիշտ այն եղանակաւ՝ ինչպէս առենօք ենիչէրիները կըտիրապետէին Սուլթան Սելիմի օրով ընկերական և սեռական խնդիրներու վրայ։

Հիմա մեզ մօտ, նա՝ որ աշխարհի փորձանքներուն պատահելով այլ և այլ ձեռնարկներու մէջ չի յաջողիր, նա որ կը սնանկանայ, նա՝ որ անգործութենէ կըյուսահատի՝ կ'ապաւինի մի կարող ձեռքի, կը մանէ նորա թևին ներքև պատառ մը հաց ճարելու և միևնոյն առեն ազգին չահերը պաշտպանելու(?)։

Parvenu-ներ այս եղանակաւ կ'ապահովեն իրենց չահերը ազդիններովը ականջ չի դնելով երբեք բարոյականի ձայնին, գործելով անձնական չահերու պահանջմանց համաձայն և իշխելով առնձրձակ անիշխանութենէ օգուտ քաղելով։

Ազգային պատառաբոյծերու դասակարգին պատկանող անդամներէ մին է Իւթիւճեան էֆէնտին, որոյ նկարագիրն ոսկէ տառերով գրած է հայ Մօլիեռը իր Ազգային Ջօջերուն մէջ. «Կարապետ Իւթիւճեան մօր արդանդէն բաժնուելուն պէս զգաց թէ մարդս պարտաւոր է նախ իր փորը գոհացնել և ապա բաժանորդները, ուստի մօրը ծիծերէն կախուեցաւ և այնչափ անյագաբար ծծել սկսաւ որ քանի մը ամիսէն մօրը ծիծերը բոլորովին պարպեց և ստիպուեցաւ մնացած ամիսները աղուէսի կաթով անցնել։ հաւանական է որ մուսցմամբ Պարոնեան աւելցուցած չէ թէ՝ աղուէսի ծիծը թողլէ վերջը ազգի չինքը պըլլուեցաւ մինչ ի մահ անկէ չի բաժնուելու պայմանաւ։

Իւթիւճեանն «Մասիս» նախկին խմբագիրն և այժմեան արտօնատէրն է։ Տասը տարի չարունակ՝ երբեմն երբեմն միայն լոյս կըտեսնէր «Մասիս» այն ալ պէնկալեան հրոյ նման զանազան դոյներով, որովհետև վարձու տրուած էր «Արեւելքի»։ պայմանաժամը լրացաւ իրեն յանձնեցին դարձեալ թերթը։

Իւթիւճեան մտածեց, հարիւր ծրագիր փոխեց, երբ վստահացաւ որ կոյրերու թագաւորութեան մէջ միակնիները այլևս թագաւոր չեն համարիր՝ Պէրպէրեանի փակաւ կերպով մը ապահովելու համար թերթի գոյութիւնը։

Պէրպէրեան իր համանուն ուսումնարանի վիճակը կարող էր ապահովել այս օրականին միջոցաւ՝ ժամանակ ժամանակ ի հանդէս բերելով թերթին մէջ իր աշակերտները և այս պատրուակաւ հասստատեցին Իւթիւճեան Պէրպէրեան չահակցական ընկերութեան բերանը մանկավարժական թերթ անուն նեղքև, բայց ոչ իրենց ծախսով։ Անհատական չահերու համար հանրութիւնը կրտուժէ դարձեալ թէ բարոյապէս, թէ նիւթապէս։

Մանկավարժական հանդէսի խմբագրական ժողովին անդամներն են՝ մանկավարժութիւն չի գիտցողներ, իսկ թղթակիցները մանկավարժութենէ բառ մը չի հասկացողներ։

Վերուկ խմբագիրը թերթն յանձնելէ վերջ զգաց թէ՝ ժամանակը թանգ է և պէտք չէ զուր տեղը սահեցնել, ուստի գարձեալ մտածեց ազգին մտաւորական զարդացմանը օգնել և մի անգամայն իր գրպանը պարարել։ աղուէսային խորամանկութեամբ յաջողեցաւ գոհացուցիչ ամսաթոշակով ինքն զինքն ուսումնական խորհրդոյ քննիչ կարգել առանց մանկավարժ լինելու, մանաւանդ բնաւին մանկավարժութեան չնորհն ունենալու՝ բաւական տարիներ է ի վեր այս պաշտօնին մէջ նա ոչ միայն նիւթական ապա նաև ուրիշ կողմէն բաւականութիւն կըստանայ։

Ուսումնական խորհրդոյ քննիչութեան պաշտօնը անձնւիրաբար և առանց վճարմունքի ստանձնելու պատրաստ մարդիկ և կարող մարդիկ ունինք, բայց ոլովհետև սոքա այս ինչ կամ այն ինչ էֆէնտիի քմահաճոյքին խաղալիկ չեն դառնար և յաւէտ փուչ կըլլինին պատառաբոյծերու աչքին, ուստի չեն հրաւիրուիր որքիչ մալ նոքա իրենց կարդին ծառայութիւններ մատուցանէին ազդին։

Անցեալի խմբագիրը, ներկայի քննիչը, ապագայի ով գիտէ ինչը, իր ձեռնհասութենէ վեր ամեն ձեռնարկ ինքնայօժար կընդունի, բաւ է որ ազգային լինի, ոչ միայն կընդունի, այլ և կըհետամտի առանց խղճահարութեան և սիրով պիտի ընդունէր տնօրէնութիւնը, եթէ երբէք ազգային գրամատուն մը ունենայինք։ Իր անհամար տիտղոսներուն վրայ ահելցուցած է ազգէն մի քանի տարիէ ի վեր Ղամբրեան կաակի քննիչութիւնը. հերու Այտպահանի «Շար

Հայ Կենսագրութեան» դիրքը քննեց, այս տարի «Հայ Լրագրութեան Պատմութիւնը» տհաս գործը, գալ տարի ալ եթէ հնադիտական մի գործ ներկայանայ՝ այն ալ կըքննէ։

Հանրածանօթ Թարգմանիչը՝ որ ժողովրդի ազգութիւնէն քաջալերուելով իր թարգմանութեանց մէջ մի քիչ ֆրանսերէն ասացուածքները ջընջած է ճիշտ այն երախաներու նման, որք վարպետներու անուշադիր վայրկեաններէն օգուտ քաղելով ընթերցանութեան առեն դժուարին բառերը ցաւակելով կանցնին՝ ծայր աստիճան չհասխղիր է, որուն համար Պարոնեան կը պատմէ. «Թարգմանութիւններուն համար բաւական դափնեայ պսակ ընդունեց զորս քակելով տուն կըզրկէր, որ օձաձուկ առնեն և դափնիներու մէջ դնելով կասկարայի վրայ եփեն, նէիրեցին իրեն նաև բաւական ձիթենիներ, զորս չնորհակալութեամբ ընդունելով կը մրմռար։

—Աւելի աղէկ չէր ըլլար, եթէ այս չափ ձիթենիի տեղ սափոր մը ձէթ ղրկէք ինձի»։

Գոնէ էֆէնտիի բոլոր հոդևկան և բարոյական կարողութիւններն եռևակայելէ վերջը, դժուար չէ մակաբերել որ՝ հայր Գալէմքէրեանի աշխատասիրութենէն քաղուած «Հայ Լրագրութեան պատմութիւն» գործի պակասն անչուշտ մի ապագայ ակնկալութեան յուսովն ըրած է։

Աղէքսանդրոպօլցի պարոնի գիրքը եթէ հրապարակ եկնէ և բաղդատուի հայր Գալէմքէրեանի գրքին հետ, կարծեմ պիտի տարբերի առաջինը երկրորդէն մի քանի ոչ-պատմական փոփոխութիւններով. տեղ մը պիտի կարդացուի պէղ մը գովասանք և չարք մը չողոքորթութիւն չհայլուած X***-ի և N***, իսկ խնդ մալ անպատկառ ուղ կտի և անորոշ տեսութիւններ Y***-ի նկատմամբ։

Ամենէն անմիտ մարդը կրնար մտածել թէ՝ այդպիսի մի դժուարին ձեռնարկ Վենետիկի և Վիեննայի մէջ միայն կարելի էր պատրաստել մինչև անգամ ոչ իսկ Էջմիածնայ մէջ ուր թէև ամեն տօքիւման կըգնուի, բայց ոչինչ Մխիթարեան հայրերու խնամօքը կըպատհի։

Պ. Ֆ. Զ. Լևոնեան Կովկասեան որ դրադարանէն օգուտեցաւ, քանի որ մեր լսածին հաւատալով, իր հայրենիքէն գոնը ուրիչ աշխարհ և երկդասեան ուսումնարանէն զատ ուրիչ դպրոց չի ճանաչեր։

Հրապարակային անկեղծ խոստովանանք մը եթէ ընէ պարոնը, իր յանդգնութիւնը միայն մի քիչ պիտի դասապարտի, իսկ Իւթիւճեանի տգիտութիւնն ու կուսակցական հոգին։

Մինակ չէ ծերունին ասպարէզին վրայ, կան ուրիչ մակաբոյծեր ալ որ իր հետ ապրած են, կապրին և անչուշտ պիտի ապրին, քանի որ հայ ժողովուրդն ու եկեղեցականութիւնը մնան, պիտի ապրին ծծելով իրը տղրուկ երբեմն աշխարհականութիւնը և երբեմն ալ հոգևորականութիւնը։

ԿԱՐԱ—ԻԼԱՆ

20-ին յուլիսի 1984 թ.

Կ. Պոլիս

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—

ԱՆՄԵՂ, Վ.Ա.ՃԱՌ-Ք, *հեղինակութիւն Բաֆֆիի, Թարգմանութիւնն վրացերէն լեզուով* Տ. Ե. Տէր-Ադամեանցի Թիֆլիս 1894 թ. 55 երես, գինն է 20 կոպէկ։

I

Ժողովրդի կեանքի և ուղղութեան ուսումնասիրութեան դլխաւոր տղբիւրներից մէկը գրականութիւնն է։ Ահա այդ բանը աչքի առաջ ունենալով, վերջին տարիներում յայտնուեցան հայոց մէջ այնպիսի երիտասարդներ, որոնք վրաց լեզուին ծանօթ լինելով, սկսեցին ուսումնասիրել վրաց գրականութիւնը և փոխադարձաբար թարգմանութիւններ անել ինչպէս վրացերէնից հայերէն, այնպէս էլ հայերէնից վրացերէն (որովհետև վրացիների մէջ ոչ ոք չը կայ, որ հայերէն այնպէս իմանայ, ինչպէս հայերը վրացերէն են իմանում) և այդպիսով ծանօթացնել վրացիներին հայերի հետ և ընդհակառակը։

Այդ դիտաւորութեամբ էլ հայոց մէջ «Մշակը», «Մուրճը» և «Տարազը», իսկ վրաց մէջ «Կուալին» առաջին քայլն արին։

Վրաց հրապարակախօս, «Կուալի»-ի խմբագիր պ. Գ. Ծէրեթէլին, որ յայտնի է իրըև «Վրաց և հայոց համերաշխութեան խնդրի» ջերմ պաշտպան, առաջին անգամ դուրս եկաւ իր «Կուալիի» մէջ և «Վրաց և հայոց յարաբերութիւն» (տես 1893 թ. Տարազ № 20) գեղեցիկ յօդուածով բացատրեց վրացիներին», որ հայերը և՝ վրացիները իրըև դարևոր հարևաններ պիտի համերաշխ լինեն և ոչ թէ առևտրութեամբ վերաբերուեն միմեանց։

«Կուալին» ևս կամենալով վրացիներին ծանօթացնել հայերի հետ, ուսումնասիրել հայկական կեանքը և նրանց հասարակական գործունէութիւնը, այդ պատճառով յիշեալ չաբաթաթերթում անցեալ տարի տըպեցան մի չարք յօդուածներ, որով վրացիք ծանօթացան մեր թատրոնական, մի քանի հասարակական գործերի, կուսակցութիւնների և նրանց ուղղութիւնների հետ։ Յետոյ տպեցան Րաֆֆիից թարգմանութիւնները. «Դաւրիչ», «Վրաց արքայազն Աղէքսանդրի կեանքը Պարսկաստանում», և այս տարի էլ կըտպագրուին «Մշակի» ուղղութիւնը և Գր. Արծրունու կենսագրութիւնը» և «Կ. Պոլսոյ հայոց սահմանադրութիւն» երկար յօդուածները։

Զը նայելով, որ հայոց գրականութիւնը վրաց գրականութիւնից բարձր է, բայց չըպիտի ուրանալ, որ վրաց նորագոյն գրականութեան մէջ ևս կան այնպիսի գրւածներ, որոնք արժանի են թարգմանել հայերէն։

Մենք ունենք իշխան Իլ. Ճաւճաւաձէի (Իվերիայի խմբագրի) «Կացիա ադամիանի!» (Մի՛թէ մարդ է ադամորդին) վէպի հայերէն թարգմանութիւնը (Տ. Փիլոմեանի, «Մուրճում»)։ Պ. Տ. Փիլոմեանը թարգմանեց (չընայելով անյայտ) և Հայոց հրատ. ընկ. միջոցով հրատարակեց վրաց մէջ յայտնի վիպասան Կազբէկի «Էլգուջա» վէպը։

Այնուհետև «Մուրճում» լոյս տեսան պ. Մ. Նաւասարդեանի թարգմանութիւնները նոյնպէս Կազբէկից «Զորի նահապետ Գոչա» վէպը և «Էխսո», «Էլբէրդ», «Բերդիա» («Տարազում»), և Գաբաչուլիից «Երկլեզուն և Քուչէ» վէպիկները։

Այս տարւայ «Տարազի» համարներում լոյս տեսան մեր թարգմանած վէպիկները Կազբէկից. «Նինօ», «Ցիցկա», «Փաթի» և այդէն բոլորովին պատրաստ է և առանձին գրքով լոյս կը

տեսնի նոյն հեղինակի «Յիկօ» վէպին հայերէն թարգմանութիւնը։ *)

Այդպիսով մենք բաւական ծանօթացանք վրաց Կաղբէկի գրուածքների հետ, սակայն վրացիք Րաֆֆիի գերչին ծանօթ են միմիայն նրա մի քանի վէպիկներով, որոնք վրացերէն թարգմանուած են (Սպանդանոց, Սով, Անբախտ Հռիփսիմէ, Տնային փեսայ, Դաւիթ, և Վրաց արք։ Աղէքսանդրի կեանքը Պարսկաստանում)։ Այդ վէպիկները վրացիներին Րաֆֆիի տաղանդի և նրա գեղարուեստական գրուածների մասին այն գաղափարն չեն տալիս, ինչ որ իսկապէս է Րաֆֆին։ Հարկաւոր է թարգմանել և տալ վրացիների ձեռքը Րաֆֆիի «Դաւիթ-Բէկ», «Սամուէլ», «Կայծեր», «Խենթ», «Զալալէդդին» և այլն նշանաւոր վէպերը։ **)

II

Մօտ օրերս պատահաբար մեր ձեռքն ընկաւ Տ. Ն. Տէր-Աստուածատրեանի անճոռնի թարգմանած Րաֆֆիի «Անմեղ վաճառքը»,—վրացին այդ վէպիկը կարդալուց յետոյ Րաֆֆիին կընմանեցնի որ և է գերող Սկանդարնովին կամ Փուրցելաձէին, որոնցից առաջինը վրացիների մէջ յայտնի է լերը վողոցային ոտանաւորներով, իսկ երկրորդը իր անճոռնի վէպիկներով։

Ցիշեալ Տ. Ն. Տէր-Աստուածատրեանն այնքան ազէտ է հղել վրացերէնի մէջ, որ վաճառք (վաճերոբա) թարգմանել է Զոհ (սխվէրպլի), պաշար (սուրսաթի) թարգմանել է բեռ (տվերթի) (եր. 4). պատասխանել (պասուխիս գէրա) թարգմ. է ձայն հանել (խմիս ամողէբա) (երես 5). վաչխառու թարգմանել է անազնիւ (ուսվինդիսօ) (եր. 18) և այլն։ Թարգմանիչն այնպիսի բառեր և ոճեր է գործ ածել, որ ոչ մի վրացին չի հասկանալ, որովհետև դրանք ուղղակի հայերէնից բառացի թարգմանութիւններ են, ինչպէս մի վրացի իշխան չիմանալով ռուսերէն МИЛЫЙ КНЯЗЬ-թարգմանել է «սաղնոտած իշխան»։ օրինակ «գրողը տանի նըրա գլուխը», որ նշանակում է «սատանան տանի նրա գլուխը», Տ. Ն. Տէր-Աստուածատրեանը թարգմանել է «տանողը տանի նրա գլուխը» (երես 7)։

Բացի դրանից որտեղ Րաֆֆին գործ է դնում գեղեցիկ նկարագրութիւններ և համեմատութիւններ, թարգմանիչը չը կարողանալով վրացերէն թարգմանել, բոլորը հանում է և դրանց փոխարէն իրա ցանկացած նախադասութիւնները դնում։

Մենք զարմանում ենք որ Րաֆֆիի խնամակալները ի չարն են գործ դրել իրանց իրաւունքը և թոյլ են տուել պ. Մ. Զմիչկովին (հայերէն օրացոյցների կազմող և հրատարակիչն է) հրատարակել այդպիսի մի թարգմանութիւն, քանի որ դա նսեմացնում է Րաֆֆիի տաղանդը։ Արդեօք վրացիք ինչ գաղափար պիտի կազմեն Րաֆֆիի մասին... Դ. Տ.-Դ.

ԴԻՕԴԻՆԷՍԻ ուած յանդիմանութիւնները կեղծաւորներին, անպատիւներին, դոռոզներին, պճնասէրներին և այլոց ու նրա խօսակցութիւնը Փիլոմէդօնի հետ

—

—Բայց չէ որ քո ծնողները և նախնիքը բոլորն էլ Սինոպացիք էին, այնպէս որ դու ամբողջովին Սինոպին ես պատկանում. դու այն ընկերութեան անդամն ես կամ քաղաքացի և այդ պատճառով նա կարող է քեզանից զանազան պարտականութիւններ պահանջել։

—Ո՛չ, այդպէս չէ, որ իմ նախնիքը, Սինոպի քաղաքացիք էին, այդ ինձ չի պարտաւորեցնում նոյնը լինելու, որովհետև մարդս ծննդեամբ չի դառնում քաղաքացի, կամ մի որ և է ընկերութեան անդամ. Բնութիւնն իր որդոց բոլորովին ազատ է արտադրում, անկախ, հաւասար, միմիայն մի պարտականութեամբ, այն է՝ ցաւակցութիւն դէպի իր նմաններըր։ Մի որև է առանձին ընկերութեան անդամ կամ քաղաքացի դառնում է մարդս միայն այն ժամանակ, երբ նա իր համար մի որ և է օգուտ է պահանջում այդ ընկերութիւնից, կամ երբ մտնում է նրա հովանաւորութեան ներքոյ։

Ես չեմ փնտրում հովանաւորութիւն, ես ոչինչ չեմ պահանջում ոչ մի ընկերութիւնից, ուստի ինձ չեն անւանում Սինոպի քաղաքացի, ոչ Աթէնքի, ոչ Սպարտացի, ես քաղաքացի եմ ամբողջ աշխարհի։

—Բայց ինչ է նշանակում լինել ամբողջ աշխարհի քաղաքացի։

—Այդ նշանակում է այն տեսակ մի մարդ, որն ինձ նման ոչ մի առանձին ընկերութեան չի պատկանում, այլ ամբողջ երկիրը իր հայրենիք է համարում և բոլոր մարդկանց իր հայրենակիցները, կամ աւելի լաւ է իր եղբայրները, թող զանազանւի նա թէ իր բնակութեան տեղով, թէ բարբառով, թէ ուսուիքով և հագնելիքով և թէ կեանքի այլ սովորութիւններով։ Այդ տեսակ անձնաւորութիւն նրան պարտաւոր է համարում օգնութեան ձեռք կարկառել այն ամենքին, որոնք իր օգնութեան կարօտ են, իսկ եթէ չի կարող օգնել, այն ժամանակ գոնէ կարեկցում է նրան։ Այդ տեսակ անհատը աչխատում է զգուշացնել մարդուն վտանգից, եթէ տեսնում է նրան մոլորւած և ուրիշի ուրախութեան հետ ինքն էլ է ուրախանում։

—Սնապաշտութիւնը, կողմնապահութիւնը, չահասիրութիւնը և այլ յանցանքները միշտ տիրում են մեզ երբ որ և է առանձին ընկերութեան անդամ ենք համարում մեզ, և վախենում ենք կորցնել մեր արժէքը նրա աչքում, ու ստրկաբար հետևում ենք նրա չատ յիմար սովորութիւններին։ Ով որ այդ ընկերութեան մեծ բարեգործ է համարւում, նա խոհականութեան պատասրի առաջ գարչելի մարգ-րէ է ներկայանում։

Իսկ նա, որին մի ընկերութիւն կամ թագաւորութիւն արձան է կանգնեցնում, նրան ուրիշ թագաւորութեան տարեգրութիւնների մէջ հայհոյանք են մատուցանում, որպէս անճչմարիտ և չար մարդու։

Միմիայն բոլոր աչխարհի քա-

---

*) Կազմւած է վրացերէն իմացող երեք անձերից բաղկացած մի փոքրիկ ընկերութիւն, (Մ. Նաւասարդեան, Ց. Միրիմանեան և Դ. Տէր-Դաւթեան) որի նպատակն է առանձին դրքերով լոյս ընծայել վրացիների մէջ յայտնի հեղինակութիւնների վրացերէնից հայերէն և հայերէնից վրացերէն թարգմանութիւնը։

**) Մենք թարգմանել ենք Րաֆֆիի «Դաւիթ-Բէկ» և «Զալալէդդին» վէպերը, բայց լոյս ընծայելու համար հարկաւոր են ահագին ծախսեր, որոնք մեր ոյժերից վեր են։

Ծ. յօդ.

ղաքացին կարող է զգալ դէպի բոլոր մարդիկ մաքուր և առհասարակ անարատ սէր։ Նրա ջերմ սիրտը կըզբից չի թուլանում, այլ առաւել արագ է բաբախում մարդկային իւրաքանչիւր բարի գործի համար։ Ամբողջ քնութեան մէջ տարածւում է նրա բարեհայեցողութիւնը։ Նա քընքշութեամբ է նայում այն ազբիւրի վրայ, որ իր ծարաւը յագեցնում է, այն ծառի վրայ, որի տուերների ներքոյ նա հանգչելու է և առաջինը՝ ով կընատի նրա մօտ, ինչ ազգից ուզում է լինի, կըհանդիսանայ իբրև նրա մտերիմ, իսկ եթէ նրանց սըրտերը արձագանք կըտան միմեանց, այն ժամանակ կըլինեն մինչև անգամ և բարեկամ։

Եւ մարդկանց այդ տեսակ յարաբերութիւնների համար առաւութեամբ վարձատրում են նրան, մինչև անգամ եթէ նա զրկւած էլ լինէր հասարակական որ և է իրաւունքից կամ պարգևից։

Այդ տեսակ մարդը սովոր է բացի ամենաանհրաժեշտ բանից՝ դոնել անպէտք այն բոլորը, ինչ որ թուում է պիտանի այնպիսի մարդկանց, որոնք փչացած են անգործութիւնից, չոայլութիւնից, ուստի այդպիսի մարդուն հեշտ է ամեն տեղ ապրել և ոչ ոքին ձանձրոյթ չի պատճառիլ։ Ահա թէ ումն են կոչում «աշխարհաքաղաքացի», և աշխատում եմ ես էլ լինել նոյնպիսի։

Դու և քեզ նման մարդիկ ինձ անօգուտ են համարում։ Բայց դուք ինքներդ մեղաւոր էք այս բանում, ես ձեզ անօգուտ եմ թուում միայն այն պատճառով, որ ձեր պատւախրութիւնը չեմ չողոքրդութում, ձեզ ձեր յիմարութեան մէջ չեմ խրախուսում և չեմ մղում ձեզ այն ճանապարհի վրայ որ տանում է դէպի անկումը։ Անմիտ, կոյր մարդիկ, մտածեցէք, միթէ ես ձեզ օգուտ չեմ բերում հէնց այս յանդիմանութեամբ։

Դ.

գեղարուեստ

ԹԱՏՐՈՆ

Հայոց թատրոնական գործը, ինչպէս երևում է, ներկայ սեզօնին ուրիչ կազմակերպութիւն է ստանալու։ Դրամատիկական խմբի դերասանները մշակում են մի կանոնադրութիւն, որ պիտի պարտաւորեցուցիչ լինի բոլոր մասնակցողների համար։ Այդ կանոնադրութեան հիման վրայ բեմերտուրի ընտրութեան համար ընտրւելու է խմբագրական մասնաժողով, բաժխսող և քարտուղար։ Մտադիր են 25 ներկայացում տալ բենեֆիսների հետ։

Յուսանք որ այդ կերպով, ընկերական հիմունքների վրայ դրւած, գործը գոնէ այս սեզօնին առաջ կերթայ։

—

Տեղական «Կաւկազ» լրագիրը հաղորդում է, որ մի քանի դեղարւեստի յարգողների մէջ ծնել է միտք հիմնելու Թիֆլիսում մի նոր ընկերութիւն, որ նպատակ կունենայ միայն տալու սիրողների ներկայացումներ՝ լոկ բարեգործական նպատակով։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թիֆլիսին ոչ անծանօթ երգիչ-բարիտոն Բ. Ամիրջանեան Միլանի իտալական կոնսերւատօրիան աւարտել է առաջնակարգ մեդալով։ Նա երգելու է Զիօջջի թատրոնում և առաջին դերերում դուրս կըգայ «Փաուստ» (Վալէնտինի դերում) և «Պուրիտան» օպերաներում։ Նա երգելու կրկնութիւններ է անում հետեւեալ նշանաւոր օպերաներում — «Այիդա», «Էրնանի» և «Տրաւիատա»։

Յանկանում ենք աշխատասէր երգչին յաջողութիւն։

ՄԱՀԱՊԱՅԺ

† ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՏԻՍԵԱՆ

Դարձեալ մի տխուր լուր։ Հեռագիրը Գերմանիայի Նոհէյմ քաղաքից գուժեց Թիֆլիսի նահանգի և Ձաքաթալի շրջանի արքունական կալւածների կառավարիչ Յ. Ս. Խատիսեանի մահը, որ տեղի է ունեցել այդ քաղաքում օգոստոսի 6-ին։

Հանգուցեալը ճանաչւած է հայերից և ռուսներից իբրև ազնիւ, բարի և կարգապահ պաշտօնեայ։ Նա ծնւել է Թիֆլիսում 1838 թւին. բարձրագոյն ուսման ընթացքը աւարտեց ֆիզիկո-մաթեմատիկական բաժնում, իբրև կանդիդատ այդ գիտութիւնների։ Ապա արտասահմանում կատարելագործւելով, մտնում է 1861 թւին պետական ծառայութեան մէջ և 33 տարւայ ընթացքում կատարում է աջողութեամբ իր վրայ դրւած ծանր պարտաւորութիւնները։

Նա մասնակցութիւն է ունեցել Համարեա Կովկասում կազմւելի ընկերութիւնների մշակման մէջ և իր փորձառու խորհրդով մեծ ծառայութիւն է մատուցանում։ Իբրև գիւղատնտեսական ընկերութեան քարտուղար, խորհրդի անդամ, ապա փոխ-նախագահ նա շատ անփորձ այժերի է առաջ մղել, իսկ հասարակական և քաղաքային գործերում իբրև իրաւասու, հոգաբարձու եղել է ողջախոհ, ամուր կամքի տէր։ Յ. Խատիսեանը մինչև վերջերս վարում էր Յովնանեան դպրոցի հոգաբարձւի պաշտօնը։

Հանգուցեալի բարեխիղճ ծառայութիւնը պսակել է պետութիւնից բազմաթիւ շքանշաններով և արժանացել է իսկական պետական խորհրդականի (գեներալ-մայոր) բարձր աստիճանին։

Յ. Խատիսեանը վախճանւեցաւ 56 տարեկան, առոյգ հասակում, նա դեռ շատ օգտակար կարող էր լինել մեր հասարակութեան։ Թող այդպիսի ազնիւ քաղաքացիներ անպակաս լինին մեզանից։

Թաղումը տեղի կունենայ Թիֆլիսում, օգոստոսի վերջին։

դպրոցական

—

Ռուբայիսում հիմնուում է ռուսաց հոգևոր դպրանոց։ Վրաստանի էկզարխ Վլադիմիրը անձամբ գնացել է Ռուբայիս և դպրանոցի շինութեան տեղը որոշել։ Սոյն աշունքից սկսելու է դասատուութիւնը։ Վերատեսուչ է նշանակուած Նովգորոդի թեմի աբեղաներից մէկը։

—

Թիֆլիսի գեմնազիաներում, իգական և ուրիշ դպրոցներում հարցաքննութիւնները սկսելու են օգոստոսի 20-ից, իսկ դասատուութիւնը սեպտեմբերի 1-ից։

———

ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ՄԱՐԴԱԿԵՐՆԵՐ

—

Մարդակերներն ապրում են արևմտեան Ամերիկայում, Ամազոնի անտառներում, Զանզեան կղզիներում, իսկ ամենաչոր տպրում են միջին Աֆրիկայում։ Դրանք երկու միլիոն են։ Արևմտեան Աֆրիկայի մարդակերներն իրանց ձեռքն են զգում թշնամուն թէ չէ, իսկոյն հանում են նրա սիրտը և ուտում։ Ամազոնի անտառներում ապրող մարդակերները (մօտ 10,000) սովորութիւն ունեն միմեանց ուտել։ Զանզեան կղզիների և Նորգվինեայի մարդակերների ձեռքին է այնպէս դերիների վիճակը, որոնց նախ գերացնում են և տալա ուտում։ Միջին Աֆրիկայի մարդակերները չատ զգուշ սովորութիւն ունեն, մինչև մարդու լեշը չի հոտում, չեն ուտում։ Մարդակեր Զանդերն էլ նոյն սովորութիւնն ունեն։ Դրանք ոչ թէ միայն գերիներին, այլ և իրանց բարեկամներին էլ ուտում են։ Մի անգամ մի ճանապարհորդ վրայ էր հասել նրանց ճաշին այն ժամանակ, երբ խորոված երեխայ էին ուտում։ Զանգերը Աֆրիկայում վերջին ժամանակ մոռացան այդ սովորութիւնը։

———

ԻՄԱՍՏՆԵՐ

—

Մարդու գազանական ինստինկտը զսպելու համար է կրօնը, էթիկան, պօլիտիկան և գեղարուեստը. գիտութիւնը, փիլիսոփայութիւնը և դաստիարակութիւնը։ Ն

—

Եղիցի խաղաղութիւն ի զօրութեան քում։

Սաղմ. ՃԻԱ.

—

Մարդ յանդիմանողը վերջը շնորհ կըգտնէ, աւելի քան շողոքորթողը։

Սողոմոն

—

Ամբարտաւանութիւնն ինքնահաւանութեան նախաշաւիղն է։

—

Օրէնքը պիտի թագաւորէ և ոչ մարդը։

Ֆինըլօն

—

Մի փիլիսոփայի հարցրին թէ՞նչ բան է ամենագեղեցիկը. պատասխանեց. — աշխարհը։ Ո՞ր բանն է ամենամեծը.—Տարածութիւնը, որ ամեն բան բովանդակում է իր մէջ։ Ինչն է ամենից արագը, պատասխանեց. — Միտքը։ Ո՞ր բանն է ամենից զօրաւորը. — Կարգը, որովհետև ամեն բանի յաղթում է։

—

Ես նշմարեցի ամեն երկրում ընդհանրապէս, որ հարստութեան մի ուրիշ անունն է, որ տուել են ազատութեան և թէ ոչ ոք անկախութիւնը չէ սիրում մինչ այն աստիճան, որ չըկամենար կորացնել իր կամքի տակ այն մարդկանց կամքը, որոնք նրա հետ ընկերութեան մէջ են։

Օլիվեր.

—

Երևոյթներ առաջ բերելը բնութեան գործն է, երևոյթների քննութիւնը՝ իմացականութեան. քննող միտքը միշտ պատճառների և հետևանքների հետամուտ է։

Սյդնեհան

——

մանր լուրեր

—

Այն երկաթուղիական գծի ուղղութիւնը, որ պիտի Թիֆլիսից կարս անցնէր, կորոշւի սոյն ամսի վերջին։

—

Կովկասում ներկայ թուից հաշտարար պատուաւոր դատաւորներ են նըշանակուած պետութիւնից. 65 հոգուց ըստ ազգութեան 6 հոգի հայ են։

Ահա հայերի անունները. Թիֆլիսի նահանգում նշանակուած են՝ իշխ. Ն. Աղրութեան-Երկայնաբազուկ և իշխ. Ս. Բէհբութեան։ Գանձակի նահանգում՝ բժշկ. Մելիք-Բէգլարեան, Ն. Գևօրգեանց և պաշտօնաթող գնդապետ Քալանթարեան։ Բագուի նահանգում՝ Ղուկասեան և Դադաշեանի պին. նահանգապետի օգնական Իզրաչեան։

—

Սոյն ամսին Կովկաս է գալու երկրագործութեան և պետական կալւածների մինիստր Ա. Ս. Երմոլով, որ գլխաւորապէս իր ուշադրութիւնը դարձնելու է դիւղատնտեսական արդիւնքների մշակման և զարգացման վրայ։

—

Բուխարայի էմիրը օգոստոսի 1-ին Պետերբուրգ է եկել լացուկմնիերով բժշկելու։ Նրան ուղեկցում են իր որդին, մինիստր Աստանաղուլ Դիւան-Բէգի, երեսուն ծառաներ և ուրիշ պաշտօնական անձինք։

—

«Վան» չոգենաւի վրայ՝ Աստարխանից Բագու մտնելու ժամանակ՝ խոլերանման մի դէպք է պատահել

Նաև անմիջապես կարանտինի է ենթարկել և բոլոր ուղևորներին և բեռներները դեզինֆեկցիա են արել։

—

Շուշեցի բանկիր Ժամհարեան մը-տադրել է իր հայրենի քաղաքում բանկ հիմնելու Ժողովուրդը համաձայնել է նրա հետ և խնդրագիր է կազմել դիմելու իշխանութեան՝ հիմնելու Շուշում փոխադարձ վարկի ընկերութիւն։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

տեղեկատու

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի տրձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վ՝րաբուժութեան և վինեբական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Մ. Չիկովանի—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.

Գ. Գ. Րուդկովսկի—10½—11½ ժ. ներքին, երեխայոց և կանանց հ.

Ի. Ֆ. Պրօտասևիչ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ Տուբբովիչ—12½—1 ժ. կանանց հ.

Ա, Պ. Կարապետեան—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Բ. Ե. Նաւասարդեան—7—7½ ժ.

Ի. Ա. Ֆրանցիուս—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Ա. Գ. Գուբկօ քիմի-խոչորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խիի, արեան, կաթի մէջ և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհուրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունում են և դիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապ. Նաւասարդեան։

——

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

Շարունակւում է ներկայ թուականի բաժանորդագրութիւնը և բացառած է երկրորդ կիսամեակինը։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. է, կէս տարւանը 2 ր., ՏԱՐԱԶԻՆԸ տարեկան 6 ր., կէս տարւանը 3 ր.։

Նոր բաժանորդը կարող է ստանալ բոլոր լոյս տեսած №№-ը առանց բացառութեան։

Պրէմիանները ստացող բաժանորդը, բացի բաժանորդագինը՝ պէտք է ուղարկի ԱՂԲԻՒՐԻ համար 1 ր., ՏԱՐԱԶԻ 4 ր.։

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Агбюръ“, կամ „Таразъ“.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ

ԳԻՐՔ Ը.

Գինն է 60 կոպ.

Յանկացողները բարեհաճեն դիմել Մայր Ամառոյ Տպարանական վարչութեան։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՓՐԱԿԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿ. ԽՆԴԻՐՆԵՐ

Ծախւում է յայտնի գրավաճառանոցներում,

Բացառ ԱՐՕՐ տպարանում։ Գինը 1 ր.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

պատկերը ձեւնապակու վրայ

Հատը 3 ր., ճանապարհածախսով 4 ր.

Դիմել՝ Тифлисъ, АГБЮРЪ-ТАРАЗЪ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՎ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է

Կարճ միջոցում ֆրանսերէն ԿԱՐԴԱԼ, ԴՐԵԼ և մի քանի ամսւայ ընթացքում կանոնաւոր ԽՕՍԵԼ սովորել, թող դիմէ «Տարազի» խմբագրութեան, պ. Արչակ Մեհրաբեանին։ (5—2)

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՎԷՊԸ

վաճառւում է Հեղինակի մօտ՝ Тифлисъ, Ширванзадэ.

Ծանապարհածախսով գինը 1 ր. 50 կ. (0—3)

Վաճառւում են

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

1) ԽՕԼԵՐ, *վօդըվիլ մէկ արարւածով, գինն է* 10 կ.

2) ԱՐՒՈՒԹԵԱՆ ԹԵԻԵՐԸ, *պատկերազարդ (Թարգ.) գինն է* 30 կ. *Դիմել՝ «Տարազի» խմբագրութեան։*

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Հետևեալ մեծագիր պատկերները.	Ր.	Կ.
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿ	„	50
ԴԱՄԱՌ-ՔԱՔԻՊԱ	„	40
ՐԱՖՖԻ	„	40
Պ. ԱՊԱՄԵԱՆ	1	„

Գումարով առնողներին զիջումն կըլինի։ Ուղարկւում է և վերադիր վճարով։

Դիմել՝ Тифлисъ, Саркису Согомоняцу.

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լոյս է տեսել արդէն Լօնդօնում և ստացւել է Թիֆլիսում ճեմապակու (ֆարֆորի) վրայ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

ՄԵԾԱԴԻՐ (28×18 սանտ.) ՊԱՏԿԵՐԸ

օրերս կըստացւի և

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆԸ

Իւրաքանչիւր պատկերը պատրաստւած է այնպէս, որ պէտք չունի ոչ առանձին շրջանակի և ոչ էլ առանձին յենարանի։ Այս պատկերները իրանց գեղեցկութեամբ, լինելով մեր երկրի համար չ ը տ ե ս ն ւ ա ծ նորութիւն, անշուշտ կըգրաւեն ամենանուրբ ճաշակ ունեցող գեղարւեստագէտի ուշադրութիւնը և հրապոյրը։

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՍԵՂԱՆԻ ՎՐԱՅ ԴՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՆ

ԱՄԵՆ ՄԻ ՊԱՏԿԵՐԻ ԳԻՆԸ ԵՐԵՔ ՐՈՒԲԼԻ Է

Նա՝ ով «Ա.ղբիւր-Տարազին» միանւագ բաժանորդ է գրւել, պրեմիաներով հանդերձ, իրաւունք ունի այդ պատկերներից մ ի ա յ ն մ ի մ ի օրինակ ձեռք բերել, հատը 1 ր., վճարելով և ճանապարհածախսը։

Ա.ղգիս Վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում որպէս ձեռնարկ, իմ աշխատասիրած

«ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ»

Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի մեզ այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Ելիզաւետեան փողոց, տուն № 45։

Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայւած չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ծանապարհածախսը գնողների վրայ է։

25—3 Սարգիս քահանայ Բէգնազարեանց

Дозволено ценз. Тифлисъ, 12 августа 1894 г. Типографія Грузинск. Изд. Т-ва Лорисъ-Мелик. ул. № 14.